

# ՊԱՏՄԱԿԱՆ

**ՀԱՅԻՈՒՍԿԵՐԻ ՏԵՂԵԳՐԱՒԹԵԼԻՆ**

**ՀԱՅԱԲԾԵՑ.**

( Հ - Ի - Ա - Ն - Ի . Ա - Բ - Բ . ) .

**ՉՈԴՈՒԱՆՑ ՃԲ.**

**ԵՐԵՎ ԽԱԲԱՆՔԻ ՀԻՒՍԻՍԱԿՈՂՄՆ.**

Ի հիւսիսակողմն Համազասպ կոչեցեալ շինուածոյն են ի միում կարգի մերձ առ միմեանս երեք խորանք պատարագի, միաձեք և միակերպ համակ կերտեալք ի որբատաշ աղնիւ քարանց։ Զառաջին խորանն ի թուին ՈԿ (1211) շինեաց նամաղին որդի Սմբատայ թոռն Աւքանայ և եղ ի տեղւոջս աստղերեզմանս տոհմին իւրեանց, նուիրեաց սուրբ նշանիս զծովին զթրեռունքն շինական և զկեչենուտի այգին, զոր թագաւորայ թագաւորն Գէորգի և դուստր նորա Թամարն տուեալ էին նոցա վասն շատ ծառայութեանց իւրեանց։ Երկրորդ խորանի Սուրբ Յարութիւն՝ կոչեցելոյ խաչն անկետ կործանեալ կայ, ուստի և չունիմք տեղեկութիւն ինց։ Զերբորդ խորանն շինեաց ի թուին Հայոց ՈԿ (1220) իշխանազնեայ Քուրդն, որդի Սմբատայ եղբայր Տեղան Բարսղի, նաև զատրիսպն ի վերայ հանգատարանի իւրոյ, բայց ոչ ժամանեաց աւարտել զշինութիւնն զի կոչեց զնա Տէր, ուստի որդիք նորա Սմբատ և Աւքան կանգնեցին զխաչն և օրհնեցին զեկեղեցին վասն յիշտակի և փրկութեան հոգւոյ իւրեանց։

Արձանագիր ի վերայ աչեղափառ գեղեցիկ խաչին տուաջին խորանի. ուր Աստուածածինն ունի ի գիրկս իւր զմանկացեալն Յիուս, և հրեշտակ Տեղան բուրվառ ի ձեռին առնէ զխրնկարկութիւն։ Ի թուին Հայոց ՈԿ (1211) անուամբն Աստուծոյ ես նաշմագինս որդի Սմբատայ՝ թոռն Աւքանայ և որդիք իմ Սմբատ և Վահրամ յուսացաք ի սուրբ նշանն Հաղբատայ և եղաք ի տեղւոջ աստ զզերեզմանս մեր և զոր թագաւորայ թագաւորն Գէորգի և դուստրն նորա Թամար վասն շատ ծառայութեան զծովի սիդելով մեզ էին տուեալ և որ անդ զԱ-

բեռւնքն շինական և զկեչենութիւ այդին վասն Զաքարիայի Շահնշահին և Խվանէի արեշատութեան և մեր մեղաց թողութեան։ Եւ տէր Յովհանէս և միաբանքս ետուն մեզ զշոգւոյ Դալստեան պատարագն, և զայն աւրն՝ որ մեզ տուած է, ի մեր արդեանց սեղան զնեն։ ով խափանէ մեր մեղացն տէր է։ և որ կատարէ, աւրհնին յԱստուծոյ»։

Ի վերայ ճակատագալին երկրորդ խորանին, գրեալ է։

«Սուրբ Յարութիւն աւգնեան ապաւինելոյս ի քեզ Բարսղի»։  
Ի վերայ գեղեցկանկար խաչին որ ի գլուխ երրորդ խորանին.  
ուր երեխ պատկեր Աստուածածնի բարուր կապեալ ի գոգս  
իւր զմանկացեալն Յիսուս։

«Ի թուին Հայոց Ակթ. (1220) յառաջնորդութեան Տեառն  
Յովհաննիսի սուրբ ուխտին Հաղբատայ եռ Քուրդս\* ) որդի Արմ-  
րատայ՝ Եղբայր Տեառն Բարսղի շինեցի զեկեղեցիս և զպա-  
րսակս ի վերայ Հանգստարանի իմոյ վասն Փրկութեան Հոգւոյ  
իմոյ և ոչ ժամանեցի կատարել, զի կոչեաց զիս Տէր. և մեք  
Ամբատ և Ուքան որդիք նորա կանգնեցաք զխաչս և աւրհնե-  
ցաք զեկեղեցիս, որք երկրագելք յաղաւթս ձեր յիշեցեք  
զմեզ և զծնողս մեր»։

Առ դրան խորանացս են դասակարգ դամբարանք մեծի ակա-  
նաւոր ի. խանացն Նաշմագինայ և որդւոց իւրոյ Սմբատայ,  
Վահրամայ նաև մեծի ի. խանին Քուրդ, և որդւոց իւրոյ Արմ-  
րատայ և Ուքանայ և այլոց բազմաց տոհմից սոցա։

### ՊԱՐԻՍՊՆ.

Այժմեան պարիսպն Հաղբատայ վանից ունելով զհին հիմ-  
նարկութիւն և ի տեղիս տեղիս կիսով չափ նորոգեալ պահ-  
պանէ տակաւին զհին բարձրուցած կիսաքանդ շինուածու։  
Հնաշէն պարիսպն բոլորակաձեւ է, ի Ճ.Վ. դարուն իշխան

(\*) Ո՞վ է այս Քուրդ իշխանն, և յոյը ազգատոհմէ են սերունդք սորա-  
մինչեւ ցայսօր չէ յայտնի։ զսմանէ ոչ ի պատմութեան և ոչ յարձանա-  
գրութեան գտանեմք զտեղեկութիւն։ բայց զայս միայն բացաբանեմ, թէ  
աստ յիշեալ Քուրդն, ոչ է Ամիր - Քուրդն Սասունեան Արծրունին յիշա-  
տակեալն յարձանագիրս այսր վանից Աթ. Հատուած Յ։

Հոյոց Քուրդ որդի Սմբատայ ընդարձակեաց զպարիսայն ի հիւ-  
սիսոյ կողմանց յարեւելու Երկայնութիւն պարսպի յարեւելից  
յարեւմուսս է հարիւր քայլ. իսկ լայնութիւնն աւելի քան  
զութսուն քայլ. Ի Հին շինուածոց կանգուն մնացեալ են մին-  
չե ցարդ արեւմտեան որմունքն եւ երկոքին կամարաշեն հոյա-  
կապ դրունքն. յորոց փոքրագոյնն քայ է գեպ ի զիւղն Հաղ-  
բատ, իսկ միւս լայնարձակն յարեւելից կուռէ գեպ ի յաղ-  
բիւրն, ուստի զայ մտանէ ստորեկրեայ ջուրն ի վանս. Արեւել-  
եան դռան շինեաց Համազասպ արքեսիսկոսոսն որպէս ցու-  
ցանէ Համառօտ արձանագրութիւնն փոքր խաչաքարին ի մէջ  
որմոց պարսպին արտաքուստ. \* Ի թուին Ո՞ւե. (1246) յա-  
ռաջնորդութեան տեառն Համազասպայ շինեցաւ . . . :

# ՅԱԴԿԱՐԱՎՈՐ ՀՐ.

# ՎԱՐԺԱՐԱՆ (ԶԻԹԱՀԱՆՔ)

Առերի հրաշակերտ զանգակատան Հաղթատայ ի հիւսիսա-  
կողմն ի վերայ արձակախյրի կառուցեալ կոյ քարաշէն զե-  
զեցկայարմար Վարժարան, բաժանեալ յերկուս արձակ դա-  
սակարգո ճարտարաշէն կամարօք և երկու մեծամեծ զմբէ-  
թայարկ լուսամտօք, երկայնութիւն որոյ է 43 արշին, իսկ լոյ-  
նութիւն 13: Սակայն չունելով յիւր վերայ արձանագրութիւն  
ինչ, չէ յայտ, թէ Երբ, յումի՞ կառուցեալ է այս ազգօ-  
գուտ վարժարան վասն կրթութեան աշակերտելոցն ի մենաս-  
տանի աստ: Միմիայն արձանագրութիւն՝ որ ի վերայ որմոց  
խորանին ձախուկողմեան դասու մեծի զաւթիւն յիշէ զանուն  
նուիրադի ձիթահանքին ի մենաստանս այսու վերտառութեամբ.  
• Ես Մամախաթուն այի զձիթահանքն, որ ի Վահրամայ որ-  
կեացն գնեցի՝ և զմի ակն. որ Երբ ժամն մերն լինի, զսեղանն  
մեր յանուն գնեն. ով խափանէ և յետ առնու զձիթահանքն  
ի վանիցս զվերոգրեալ նզովսն առցէ: • Այլ թէ այս վարժա-  
րանի շինուածն է Յէնահանդն, զոր այժմ յետագայք առհա-  
սպակ կոչեն ձիթահանք տակս գտանելոյ ի միջի նորա քանի  
մի պարագայից ձիթահանութեան, տակաւին չէ յայտ. տակայն  
ըստ գրից ձեակերպութեանն և ըստ յարմար շինուածոյն  
առուել ըերէ զնմանութիւն վարժառան քանթէ չնչին ձի-

թահանքի, որոյ վասն չէր պիտոյ կառուցանել այսօտի մեծավայելու շինուած. վասն որոյ ես զայս մեծակառոյց շինուած կոչեմ իսկապէս վարժարան.՝ ուրանօր երբեմն զվարժապետութեան պաշտօն կատարեցին բաղումք ի բանիքուն վարդապետաց վանիցն, մանաւանդ Յովհաննէս Պլուզ վարդապետն Երզնկացի, և միւս Յովհաննէս վարդապետ սարկաւագ կոչեցեալն, որ ստացաւ զաշակերտս բաղումս, յորս յանուանէ յիշատակին՝ Երեմիա, Խաչատուր, Դրիգոր և Յովհաննէս Անեցիք. Այս վանական վարժարան ի ծաղկեալ դրութեան կայր շարունակ ի ծ. դարէ մինչեւ ց ծ. Վ. դարն:

### ՅՈՒՊԻԱԾ ԾՊ.

#### 1) ԱՂԲԻՒՐՆ.

Արտաքոյ պարսպի վանացն է պատուական աղքիւր ցուրտ ջրոյ գեղջն, որ բղխեալ ի լեառնէ Սուրբ - Առւսոյ բերեալ է ընդերկրեայ խողովակօք մինչ ցեղը գեղջն, ուրանօր կառուցեալ է ի վերայ տղրերս գեղեցկայարմար կամարօք քարտշէն որոհ մեծ. յորում բղխեալ ջուրն հոսի ի հինգ քարեայ կերտած մեծամեծ աւաղանա: Կիյ այսր աստուածահաճոյ շինուածոյս է արձակ քարակերտ լիճն, ուր ժողովեալ ջուրյն ելանէ յուոգումն սպարտիզաց և ծաղկոցաց գեղջն:

Այս շինուած կառուցեալ է ի հայր Յովհաննիսէ արդարավաստակ առաջնորդէ տեղւոյս ըստ արձանագրութեանն որ ի ճակատ կամարին: Ի թուին Զէ (1258) «Հաստատուած կամարակապս ի Հայր Յովհաննիսէ ի հալալ ընչից իւրոց. որում ողորմեսցի Քրիստոս՝ տալով հոգւոյ նորա ի լուսեղէն յարկաց և յանմահական ջրոյն. Ամէն: »

Ի կամարակապ շինուածոց աղքերն ուղղակի հարթ ճանապարհաւերկու մղոնաչափ հեռաւորութեամք գնացեալ յառելս կոյս գէպ ի լեառն Սուրբ Լոյս յանդիման լինի ի ձորակի միում քարակերտ շինուած. որ կոչի Առաղան ի ձեւ միոյ փոքրիկ մտարան յորում բղխին յերկույ կողմանց — յարեւելից և ի հարաւոյ յորդահօս աղքիւրք ցուրտ ջրոց բերեալք ընդերկրեայ խողովակօք ի մերձակայ լերանց և հոսին ի քարակերտ աւաղանն և աստի նմանապէս խողովակօք տարեալ են մինչև

ցեղը գեղջն։ Այս քարակերտ փոքրիկ շինուած յաւուրս մեր կառոյց Անտօն արքեպիսկոպոսն ի մարանութենէ Եօմիածնի որ զհետ սրբազնագոյն Եփրեմ կաթուոփիկոսի ամենայն Հայոց եկեալ ի 1822 ամի ի սուրբ Նշանի վանս Հաղբատայ և տեսեալ թէ ի տեղւո՞է աստի մինչև ական տեղին Քու-ազբիւր իսախտեալ են խողովակքն բոլորովին, վասնորոյ սիրովն Աստուծոյ յանձն առեալ վերստին նորոգեաց զբոլոր ուղին ջրոյ ի հալալ ընչից իւրոց զամենայն ծախսն վճարելով որպէս երեխ յարձանագրութենէ աստի։

**Զովացուսչէ Տէր զհոգին**

**Անտօն արքեպիսկոպոսին։**

**Աստի մինչև ական տեղին**

**Նոր նորոգեաց արդեամբ անձին։**

**Տեղեաւ էր սա Երեանցի**

**Բնիկ միաբան Էջմիածնի։ Ի 1827 ամի։**

Այժմ յաւաղանէ աստի մինչև ցկամարակապ շինուածն աղբեր յեղը գեղջն ջրաբեր ընդերկրեայ խողովակքն իսպառ խախտեալ են. և ջուրն ի բազում տեղիս բացուած առուօք գայ սակաւուք հասանէ ի գիւղն։ Նորոգութիւն շինուածոց ջրաբեր խողովակացս կարօտի 300 մանէթի և յուսամ զի ոմանք յաստուածասէր անձանց յանձն աւցեն զայս շինութիւն ի յիշատակ անուանց իւրեանց։

## 2) ԳԵՐԵԶՄԱՆԱՑՈՒՆ.

Ի յետուստ հոյակապ շինուածոյն աղբեր սկսեալ մինչև ցանապատ կոչեցեալ կուսանաց եկեղեցին գտանի ի վերայ դաշտաձեւ Բլրոյ խաչազարդ գերեզմանատունն հասարակաց, ուր բաց ի հոյակապ և ի ստուար տապանաքարից գտանին գեղեցկաբանդակ Խաչք հանդերձ արձանագրութեամբք. և քանի մի խաչաքարք անկեալ կործանեալ են յաշխարաւեր թշնամեաց կամ ի հնութենէ ժամանակին, որոյ պատուանդանի ստուար քարինքն այժմ տեսանին։ Լեալ է աստ և սրբաշէն մատուոն յանուն սրբոյն Մինասայ զօրավարին, զոր ի յետին ժամանակս իսպառ քանդեալ են և զքարինս նորա ի զործ եղեալ են վասն շինութեան մեծի կաթուղիկէ եկեղեցւոյն։ Ի հիւսիսակողմն գերեզմանատանս գտանի այլ աւերակ մատրանաձեւ

շինուածոց յանհարթ քարանց, առ որով շար ի շար ամփոփեալ կան մարմինք հին և նոր ննջեցելոց:

Մերձ շինուածոց աղբեր յարեմաեան կողմն գերեզմանատան հսկայաձեւ կանգնեալ կայ ի վերայ երկույ աստիճանաց բարձր կապուտակ Խաչ քարեայ յանուն որբոյն Սարդոի զօրավարին, զորմէ ասեն ժողովրդականքն զու ոստ ( ճիւղք ) Սարի — Սուրբ — Սարդիս եկեղեցւոյն՝ որ ի Խաչի — դրան։ Այս բարձր խաչաքար ունի ի թիկունս իւր այսօրինակ արձանագրութիւն։

\* Նորհիւն Աստուծոյ ես Յակոբ և Մարգարէս յառաջնորդութեան Տեառն Համազասպայ՝ կանգնեցաք զսուրբ Սարդիսս բարեխաւս մեզ և Մխիթար վարդապետին Քոբայրեցւոյ և հաւր Բարսղի և ննջեցելոց մերոց։ Որք երկրպագէք Քրիստոսինկալ սուրբ նշանիս զմեզ յաղաւթս յիշեսօիք ի Տէր։ Յիշողդ աւրհնիք ի Տեառնէ։ \* Ի թիւս 27. ( 1275 )։ \* Առաջի խաչիս գտանին կից առ միմեանս հինգ դամբարանք շիրմայ, պատուեալք ստուար կոփածոյ քարամքը, յորոց երեքն ունին օրօրոցաձեւ կրկնակի բարձր տապանաքարս ի վերայ գետնամած սալայատակ քարանց առանց արձանագրութեանց։

Փոքր ինչ հեռի ի սոյն խաչաքարէ կանգնեալ կայ կարմրաշէկ քարեայ խաչ ի վերայ բարձր պատուանդանի ունելով զայս արձանագրութիւն։

\* Ի թուին ՈՇԶ. ( 1207 ) կանգնեցաւ նշանս տէրունական ի վերայ հանգստարանի պատուական քահանային Գրիգորոյ, որք երկրպագէք յիշեցէք ի Քրիստոս։ \*

Մերձ սորա ի վերայ գեղեցկաքանդակ խաչաքարին փորագրեալ է։ \* Ի թուիս ՈՂԶ. ( 1247 ) կանգնեցաւ խաչս ի վերայ հանգստարանի անպիտան աբեղայիցո — Անգրէասի, Պաւղոսի և Յովուէֆայ, որք երկրպագէք յաղաւթս յիշեսօիք։ \*

Ի միջակեղբոնի գերեզմանատանն գտանի ծաղկազարդեալ խաչ այսու արձանագրութեամբ։

\* Ի թիւս ՈԶ. ( 1231 ) կանգնեցաւ խաչս ի վերայ հանգստարանի սուրբ քահանայի Յովհաննիսի և նորին հարազատի Գրիգորոյ և Սողոմոնի և այլ ընտանեաց նորին և եղբաւր որդեաց Ատոմայ և Աքրահամու, որք երկրպագէք, յաղաւթս յիշեցէք։ \*

Բաց յայուղիկ խաչաքարացս բարձր ի վեր կանգնեալ կան

ի վայրի այսր գերեղմանատան ի վերայ միակուռք ստուար պատուանդանաց յոլով իւաչաքարք, շքեղազարդեալք վայելուչ քանդակործութեամբք, յորոց մի քանիքն են առանց արձանագրութեանց և մի քանիքն իսպառ եղծեալ կան անսերծանելի արձանագրութեամբ։ Յայսմիկ գերեղմանատան գտանին բազում օրօրոցաձև տապանաքարք, մաշեալք ի հնութենէ ժամանակին, յորոց յոլովք ունին զսուղ մակագրութիւն ինչ՝ զորօրինակ՝ «Սարկաւագ էրէցն է», «Մարգարէ», «Զինտոր», «Վասակ», «Հասան», «Դաւիթ», «Խաթուն»։ կարծեմ սա է այն Խաթունն յաղգէ Դէսումեանց որ շինեաց զեկեղեցին սուրբ Աստուածածնի։ Նաև ի վերայ սակաւուց փորագրեալ է թիւ մահուան։ Են և յոլով գերեղմանք որ ծածկեալ կան իսպառ ընդ հողով։ մանաւանդ միջակեղրոնի և հիւսիսակողման գերեղմանաքարքն։ և մեծի աշխատանաց պէտք են առ ի բանալ զստորերկեայ հողախտաղ շիրիմն և յօրինակել անտի զտապանագիրս ծածկեալ գերեղմանացն։

(Կը լ-բ-ն-ի-ն-է)։

Ռուստամ—Բէկ Նրգնկեանց։

## ԲԱՆԱՏԻՐԱԿԱՆ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻ, ՍԵՐՆԴԻ ՌՈՌԴԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ.

(Յ-բ-ն-ի- Քէրջ Ար-բ-ն- Բ. գ.)։

Է.

Այս գլխաւոր բաներն են պահանջում ահա դպրոցներից բժիշկները դալոց սերնդի առողջութեան համար։ Բայց բժիշկները չեն սահմանափակվում միայն սոցանով, այլ առաւել հեռուն են գնում։ Նոքա յարձակվում են աշակերտների սոստիկ երկար—վեց կամ եօթն ժամեան նստողական դրութեան վերայ, այս դրութեան և այս հանգամանքների մէջ և մարմնամարզութեան համարեա թէ չլինելու վերայ, որովհետեւ այդ առարկան սահմանափակվում է շարաթը մէկ կամ երկու ժամ դասամիջոցով։ Այսպէս 1871 թուի Հոկտեմբերին Բերնոկիմի դպրոցական ժողովը քննութեան ենթարկեց այս հարցը։ Նա հետեւեալ եղբակացութիւններն ընդունեց։ Դրաբոցը իւր կազմութեան և իւր գործունէութեան մէջ պէտքէ համապատասխանի հետեւեալ գլխաւոր պահանջներին։ Նպատակայարմար կազմութիւն